**Արձանագրություն N 2**

**ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-26/19 ծածկագրով «Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ. 33 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան　　　　　　　　　　　　　　　　　　　　24.02.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝　　　　Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝　　　　Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Քոչարյան
Ա. Հյուսիսյան
Ա. Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝　　　　Գ. Հակոբյան

## 1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամ-կետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2026 թվականի փետրվարի 24-ին ժամը 10:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե, կապի միջոց, էլեկտրոնային փոստի հասցե | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ | ք.Գյումրի, Շիրակացի փ. 83$_2$, բն. 40<br>arxitects@mail.ru<br>041 822 822 | 1 248 000 | 1 040 000 | 208 000 | 1 248 000 |

1.2 Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 6, դեմ - 0:

## 2. Մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման մասին

(Մ. Աղայանց)

2.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակցի՝ «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 6, դեմ - 0:

## 3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Մ. Աղայանց)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակցիի հայտը գնահատվել է բավարար:

3.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 6, դեմ – 0:

## 4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Աղայանց)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 6, դեմ – 0:

## 5. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Մ. Աղայանց)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -6, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Մ.Աղայանց

Անդամ՝ ---------------------------------------- Տ. Կոմիտասյան

---------------------------------------- Հ. Գինովյան

---------------------------------------- Ա. Քոչարյան

---------------------------------------- Ա. Հյուսիսյան

---------------------------------------- Ա. Մարգարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան